Շարունակում է բաժանորդագրութիւն 1912 թ.

„ՀՈՐԻԶՈՆ“

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹԻ

ԶՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱՎՃԱՐՆԵՐ

12 ամ.	11 ամ.	10 ամ.	9 ամ.	8 ամ.	7 ամ.	6 ամ.	5 ամ.	4 ամ.
8 ր.	7 ր. 50 կ.	7 ր.	6 ր. 50 կ.	5 ր. 75 կ.	5 ր. 20 կ.	4 ր. 50 կ.	3 ր. 90 կ.	3 ր. 20 կ.

3 ամ.	2 ամ.	1 ամ.
2 ր. 40 կ.	1 ր. 60 կ.	80 կ.

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել 40 կոպ. (կարելի և մարկաներով) և հին հասցէն, առանց որի դիմումները կը մնան անպատասխան։

„ՀՈՐԻԶՈՆԻ“ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ

խնդրում է յարգելի բաժանորդներից նրանց, որոնց բաժանորդավճարի ժամանակը լրացել է, վաղօրօք նորոգել այն, որպէսզի ստիպուած չլինենք դադարեցնել թերթի առաքումը։

Ատամնաբոյժ Ս. Գ. ԿԷՕՆՃԵԱՆԸ

վերադառնալով ամառանոցից և տեղափոխելով նոր բնակարանը՝ վերսկսեց հիւանդների ընդունելութիւնը։

Պլոմբ (ոսկեայ, արծաթեայ, ֆարֆորի և այլն), ատամի հեռացումը առանց ցաւի։ Կաբինէտին կից—լաբորատորիա արհեստական ատամների։ Ընդունելութիւնը ամեն օր առաւօտեան 9—2. երեկոյեան 4—7 ժ.։ Дермонтовская ул. № 1, д. Церковный, подъѣздъ съ переулка. 393 0—9

Փորձեցէք ծխել և կը համոզուէք

Ա Ն Ի Ի

Պապիրոսները Ակց. ընկ. „ՄԻՐ“ գործարանի

15 հ. 6 կ. 25 հ. 10 կ.

Իրանց յատկութեամբ և անուշ համով գերազանցելի են ուրիշ գործարանների աւելի թանգ գնի պապիրոսներից։

„ԱՆԻ“ ՊԱՊԻՐՈՍՆԵՐ ԱՆԻ „ԱՆԻ“ ՊԱՊԻՐՈՍՆԵՐ

342 3—2

ԲԺՇԿԱՊԵՏ

Տ. ԳԷՈՐԳԲԷԿԵԱՆ

ԱՂՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ

Ընդունելութիւնը ամեն օր
Առաւօտեան ժամը 10 1
Երեկոյեան ժամը 5—7
Վելիամինովսկայա № 8։

103 100—72

Թիֆլիզ, 12 սեպտեմբերի

ԳԻՏՔ է ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ ԴԱՀ

Թիֆլիզի Յոբելեանական Ցանձնաժողովի վերջին նիստում, ինչպէս յայտարարուած էր մեր թերթի երեկոյ համարում, որոշում է կայացել Էջմիածնի Ցանձնաժողովի հետ միասին միջնորդութիւն յարուցանելու Ամենայն Հայոց Կաթողիկոսի առաջ, որ նա յետաձգի յոբելեանի տօնը աւելի ուշ ժամանակի քան հոկտ. 13-ը կամ նոյեմբ. 26-ն է։

Թիֆլիզի Ցանձնաժողովը այս որոշումը հիմնաւորում է այն գործնական նկատումով, թէ ոչ հոկտ. 13-ին և ոչ էլ նոյեմբ. 26-ին անկարելի է լինելու պատշաճաւոր կերպով կատարել այդ տօնը՝ ի նկատի ունենալով ժամանակի սղութիւնը։

Մենք միանգամայն միանում ենք այդ որոշմանը, և այդ ոչ միայն որովհետև նա ապահովում է տօնի պատշաճաւոր կատարումը, վերացնելով ժամանակի սղութեան հարցը, այլև մի ուրիշ, խիստ կարևոր նկատումով։

Ինչպէս յայտնի է, տօնը կատարելու ժամանակի խնդիրը մի իսկական կուսախնդիր է դարձել յոբելեանը իրենց սրտին մօտ ընդունող մարդկանց համար, և այդ կուսախնդիրը մէջ տեղ նետողը եղել է Էջմիածնի Ցանձնաժողովը։

Վերջինիս կազմուելուց շատ առաջ թէ Թիֆլիզում, թէ Բագուում և թէ այլ տեղեր կազմած էին արդէն յոբելեանական յանձնաժողովներ, որոնք որոշել էին տօնը կատարել նոյեմբերի 26-ին և դրա համապատասխան էլ կարգադրել էին իրենց նախապատրաստական աշխատանքները։

Սակայն չնայած այս հանգամանքին՝ Էջմիածնի Ցանձնաժողովը, կարծէք յոբելեանի իրաւատէրը իրեն համարելով՝ որոշում է նրա տօնը կատարել հոկտ. 13-ին և այդ որոշումը ներկայացնում է Ամենայն Հայոց Կաթողիկոսին ի հաստատութիւն։

Թիֆլիզի Ցանձնաժողովը և նրա հետ միասին բանիմաց հասարակութեան մեծ մասը Էջմիածնեցոց այս վարմունքի մէջ դէպի հասարակութիւնը արհամարհանք տեսնելով՝ խիստ վրդովուած էր. այդ վրդովմունքը իր արտայայտութիւնը գտաւ մամուլի էջերում և ստացաւ այն ցաւալի իրողութիւնը, որ հայ հասարակութիւնը փոխանակ համախմբելու իր ուժերը ամենքի սրտին էլ սիրելի տօնը որքան կարելի է գեղեցիկ կերպով տօնելու՝ բաժանուեց երկու բանակի, որոնք և սկսեցին իրար դէմ նիզակներ ճօճել։

Խնդիրը այնտեղ Թիֆլիզի և նրան համախոհ այլ յանձնաժողովների մէջ աշխատող մարդկանց անձնական ամբիցիային չէր վերաբերում ի հարկէ, այլ կար այնտեղ մի սկզբունքային հարց. այդ այն է, թէ արդեօք այնպիսի մի par excellence աշխարհիկ խնդրում, որպիսին հայկական տպագրութեան և տառերի գիւտի յոբելեանը տօնելու խնդիրն է, իրաւունք ունի Էջմիածինը համակերպութիւն պահանջելու հայ հասարակութիւնից, կամ, եթէ խնդրին հակառակ կողմից մօտենանք, հայ հասարակութիւնը անզօր է այնքան, որ այդպիսի մի խնդրում առանց Էջմիածնի հրամանատարութեան հանդէս գալ կարողանայ։

Ինչ խօսք, որ նման հարցերից ոչ մէկը մեզ մօտ երկու պատասխան գտնել չէ կարող։ Ամեն տեղ հասարակական զարգացումը գնում է դէպի աշխարհականացում, դէպի հասարակական երևոյթների ազատագրումը հոգևորականների ազդեցութիւնից, և մենք էլ գնալով այդ բնականոն զարգացման ուղղութեամբ պէտք է աշխատենք որքան այդ նպատակայարմար է, որքան այդ թոյլ են տալիս շրջապատող պայմանները՝ ինքնուրոյն հիմքերի վրայ դնել մեր հասարակական կեանքը։ Այդ տեսակէտից հասկանալի է նաև, որ մենք պէտք է պնդէինք, որ Թիֆլիզի Ցանձնաժողովը և նրան յարած հայ հասարակութիւնը յոբելեանը նոյեմբերի 26-ին տօնելու իւր նախկին որոշման վրայ անյողդողդ մնայ։

Սակայն ի նկատի ունենալով այդ յոբելեանի կարևորութիւնն, ի նկատի ունենալով, որ այդ տօնը կարող է ցանկալի շքով և արդիւնաւորութեամբ կատարել միայն այն ժամանակ, երբ ամբողջ հայ հասարակութիւնը միահամուռ ուժերով կաչխատի նրա համար՝ մենք ևս միանում ենք այն որոշմանը, որ կայացրել է Թիֆլիզի Ցանձնաժողովը։ Այդ որոշումը միանգամից վերացնում է և ժամանակի սղութեան հարցը և թէ այն սառնութիւնը, որ շնորհիւ Էջմիածնի Ցանձնաժողովի ինքնագլուխ որոշման, ընկել էր յոբելեանի յօգուտ նախանձախնդիր հասարակական զանազան շրջանների մէջ։

Բայց մեզ թւում է, որ ամենայն Հայոց Կաթողիկոսի առաջ միջնորդութիւն յարուցանելու դէպքում երկու յանձնաժողովները չպէտք է միայն հոգան այն մասին, որ տօնը միաժամանակ կատարուի, այլ և յաւերժացումը ևս միահամուռ բնաւորութիւն կրի։

Ինչպէս յայտնի է, այստեղ ևս, շնորհիւ Էջմիածնի Ցանձնաժողովի՝ երկուութիւն է մտել։ Մինչև այդ Ցանձնաժողովը հրապարակի վրայ կար միայն յոբելեանը գրական ֆոնդով յաւերժացնելու հարցը, և այդ հարցը իրական հիմունքների վրայ դնելու համար մի խումբ հայ գրողներ Թիֆլիզի Ցանձնաժողովի դրդմամբ ու աջակցութեամբ մշակել էին գրողների ընկերութեան ծրագիր և ներկայացրել պատշաճաւոր իշխանութեան թոյլտուութեան ի հաստատութիւն։ Բայց ահա հրապարակ եկաւ Էջմիածնի Ցանձնաժողովի որոշումը՝ տօնը դպրոցական ֆոնդով յաւերժացնելու և ամեն ինչ իրար խառնուեց։

Տեղը չէ այստեղ նորից զբաղուելու այն հարցին, թէ այդ երկու ֆոնդերից որն է այժմէականը, մանաւանդ որ այդ մասին «Հորիզոնը» մի քանի անգամ արդէն առիթ է ունեցել արտայայտուելու։ Մենք կամենում ենք միայն մատնանշել այստեղ, որ տօնը յաւերժացնող ձեռնարկի ընդհանրութիւնը ոչ պակաս մի կարևոր խնդիր է, քան նրա միաժամանակ կատարելը, որպէս զի համաձայնութիւն կայացնելու դէպքում այս կէտը ևս ի նկատի առնուի։

Այսպէս ուրեմն համաձայնութեան կարիքը ամենուրեք զգացւում է և այդ համաձայնութեան համար Թիֆլիզի Ցանձնաժողովի կատարած որոշումը ամենանպատակայարմար և երկու կողմի համար էլ ընդունելի ելքն է հանդիսանում։ Այժմ խօսքը պատկանում է Էջմիածնի Ցանձնաժողովին և մենք յոյս ունենք, որ այս Ցանձնաժողովը ի նկատի ունենալով ոչ միայն Թիֆլիզի այլև Բագուի, Պոլսի և այլ տեղերի յանձնաժողովների տրամադրութիւնը և իրաւականութեան ճանապարհը բռնելով՝ կը միանայ Թիֆլիզի Ցանձնաժողովի որոշմանը և այդպիսով վերջ կը տայ ազգային տօնի շուրջը առաջացած այդքան անմիտ և անախորժ տարաձայնութիւններին։